

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » 20 .. թ

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 2), այսուհետ՝ «Բրոքեր», ի դեմս -----, որը գործում է բանկի կանոնադրության հիման վրա, որի անունից ----- լիազորագրով հանդես է -----, մի կողմից, և -----, այսուհետ «Հանախորդ», ի դեմս ----- մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1.1 Սույն պայմանագրի իմաստով՝

- 1.1.1. Ոչ բավարար ծածկույթով գործարք՝ Համակարգի միջոցով Հանախորդի կողմից կնքվող՝ Արժեթղթերի առքուվաճառքի գործարք, որի կնքման պահին Հանախորդը չունի այդ գործարքով իր պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գումարի դրամական միջոցներ կամ արժեթղթեր:
- 1.1.2. Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարք՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հանախորդի կողմից Արժեթղթերի օտարումն է, և որի կնքման համար Հանձնարարականը Համակարգ մուտքագրելու պահին Հանախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման/գործարքով Վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ համապատասխան Արժեթղթեր:
- 1.1.3. Ոչ բավարար ծածկույթով Առքի գործարք՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք, որի առարկան Հանախորդի կողմից Արժեթղթերի ձեռքբերումն է, և որի կնքման համար Հանձնարարականը Համակարգ մուտքագրելու պահին Հանախորդի հաշվում առկա չեն այդ գործարքի կատարման/գործարքով Վերջնահաշվարկ իրականացնելու համար անհրաժեշտ գումարի դրամական միջոցներ:
- 1.1.4. Ծածկույթ՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության տրամադրման համար Հանախորդին անհրաժեշտ միջոցների հասանելիության տրամադրում:
- 1.1.5. Նախապայմաններ՝ Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման նախապայմաններն են, մասնավորապես՝ դրանց կնքման կարգն ու պայմանները, Նախնական Մարժայի մեծությունը, Սահմանային Մարժայի մեծությունը, Տոկոսադրույքը և դրա հաշվարկման և վճարման կարգը, Ոչ բավարար ծածկույթով Վաճառքի գործարքների առարկա Արժեթղթերի սահմանափակվածությունը որոշակի Արժեթղթերով:
- 1.1.6. Հանախորդի պարտավորությունը՝ Համակարգի միջոցով Ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած՝ Բրոքերի նկատմամբ Հանախորդի պարտավորությունը՝ սույն Պայմանագրի համաձայն:
- 1.1.7. Հանախորդի դրամական պարտավորությունը՝ Հանախորդի պարտավորությունները, որոնք ծագել են Առքի Ոչ բավարար ծածկույթով գործարքի արդյունքում:
- 1.1.8. Նախնական Մարժայի մեծություն՝ Հանախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման համար անհրաժեշտ նվազագույն գումար, որի առկայության դեպքում Համակարգը հնարավոր է դարձնում այդ գումարի կամ այդ գումարին Շուկայական գնով համապատասխանող քանակությամբ Արժեթղթերի և, համապատասխանաբար, գործարքով փոխանցման ենթակա գումարի կամ գործարքով փոխանցման ենթակա Արժեթղթերի ընդհանուր քանակի տարբերության ապահովումը և գործարքի կնքումը:
- 1.1.9. Սահմանային Մարժայի մեծություն՝ Հանախորդի հաշվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքումից հետո պահպանման ենթակա նվազագույն գումար, որի առկայությունը չապահովվելու դեպքում Համակարգը ավտոմատացված կերպով (առանց Հանախորդին ծանուցելու) իրականացնում է Ոչ բավարար ծածկույթով գործարքին Հակադարձ Գործարք Շուկայական գնով,

- որի արդյունքում ստացված միջոցները ուղղվում են Բրոքերի նկատմամբ Հանախորդի դրամական և արժեթղթերով պարտավորությունները մարելուն:
- 1.1.10. Շուկայական գին՝ տվյալ գործարքի կնքման ԱՀ-ում՝ տվյալ գործարքի առարկա Արժեթղթի՝ տվյալ պահին գրանցված վերջին առքուվաճառքի գինը:
- 1.1.11. Դիրքի փակում՝ Հանախորդի կնքած գործարքների կնքման արդյունքում ստացված՝ Հանախորդի Արժեթղթերի իրացում կամ վաճառված Արժեթղթերի ձեռքբերում Շուկայական գնով՝ Հակադարձ գործարքների կնքման միջոցով:
- 1.1.12. Հակադարձ Գործարք՝ Արժեթղթերի առքի դեպքում՝ ձեռք բերված Արժեթղթերին նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) Արժեթղթերի վաճառք/օտարում, Արժեթղթերի վաճառքի դեպքում՝ օտարված Արժեթղթերին նույնական (միևնույն թողարկման, դասի և տեսակի) ձեռքբերում:
- 1.1.13. Օրական առևտուր՝ Արժեթղթերով գործարքի և դրան Հակադարձ գործարքի իրականացում Հանախորդի կողմից տվյալ ԱՀ-ում միևնույն առևտրային նստաշրջանի ընթացքում:
- 1.1.14. Կայք՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) դոմենի միջոցով հասանելի Բրոքերի ինտերնետային գլխավոր էջը (home page):
- 1.1.15. Համակարգ՝ արտասահմանյան Արժեթղթերի առքի և վաճառքի գործարքներ կնքելու հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող «Ameria Global Trading» պայմանական անվանում կրող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որին հասանելիության ապահովումը սույն պայմանագրով ծառայությունների մատուցման միջոցն է: Համակարգը ներառում է նաև Հանախորդի անձնական կարգավորումների ինտերֆեյսը (account management), որի միջոցով Հանախորդը հնարավորություն է ստանում ակտիվացնել/ապասկտիվացնել որոշակի Ծառայություններ, օգտագործել առևտրային համակարգի փորձարարական (demo) տարբերակը, տեսնել/ներբեռնել կատարված գործողությունների վերաբերյալ ամփոփագրերը/հաշվետվությունները:
- 1.1.16. Հանախորդի պարտավորություններ՝ Գործարքների (այդ թվում՝ Ոչ բավարար ծածկույթով և Աժանցյալներով) կնքման արդյունքում Հանախորդի ստանձնած պարտավորությունները և պատասխանատվությունը (այդ թվում Բրոքերի և Համակարգի օպերատորի միջնորդավճարները), իսկ դրանք երրորդ անձանց, այդ թվում Համակարգի օպերատորի կողմից կատարելու դեպքում՝ այդպիսի անձանց դրանք կատարելու հետ կապված և դրանց հետ առնչություն ունեցող ծախսերը հատուցելը, ինչպես նաև այդպիսի կատարման հետ կապված երրորդ անձանց պատճառված վնասները և պահանջները բավարարվելու արդյունքում կրած վնասները հատուցելը:
- 1.1.17. Համակարգի օպերատոր՝ անձ, որը պատասխանատու է Համակարգի ծրագրային ապահովման, գործարկման, կարգաբերման, Համակարգում հաշիվների բացման և սպասարկման, առևտրային գործիքների և ինտերֆեյսի ապահովման և Համակարգի ֆունկցիոնալ այլ տարրերի համար: Սույն պայմանագրի կնքման օրվա դրությամբ Համակարգի օպերատոր է հանդիսանում Բնտերակտիվ Բրոքերս Էլ Էլ Սի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Համակարգի առկա օպերատոր»):
- 1.1.18. Հանախորդի պայմանագիր կամ Հաշվի պայմանագիր՝ Համակարգի օպերատոր և Հանախորդի միջև կնքվող պայմանագիր՝ Հանախորդի արժույթային և արժեթղթերով հաշիվների բացման, վարման և սպասարկման և դրանով Գործարքներ իրականացնելու և Վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ:
- 1.1.19. Հանախորդի հաշիվ կամ Բրոքերային հաշիվ՝ Համակարգի օպերատորի կողմից Համակարգում բացվող, վարվող և սպասարկվող հաշիվ, որում հաշվառվում են Համակարգի միջոցով Հանախորդի ձեռք բերված Արժեթղթերը և/կամ դրանց ձեռքբերման համար նախատեսված կամ դրանց օտարումից կամ դրանցից բխող իրավունքների իրականացման արդյունքում ստացված արժույթային արժեքները:
- 1.1.20.** Պայմաններ՝ Ամերիաբանկ ՓԲԸ՝ «Էլեկտրոնային առևտրային տերմինալի միջոցով արժեթղթերով գործարքներ կնքելու հանձնարարականներ հաղորդելու ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ» ըստ սույն պայմանագրի Հավելված 2-ի՝ հետագայում սույն պայմանագրի համաձայն կատարվող փոփոխություններով: Պայմանները սույն պայմանագրով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են այժմևով, որքանով չեն հակասում սույն պայմանագրին (առանց պայմանների)
- 1.1.21. Սույն պայմանագրում մեծատառով օգտագործվող, սակայն սույն պայմանագրի 1.1. կետում չսահմանված տերմինները/հասկացությունները կիրառվում են Պայմաններում սահմանված իմաստով:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Համակարգի միջոցով, մասնավորապես՝ Հանախորդին տրամադրելով հասանելիություն Համակարգին՝ Բրոքերը հանախորդին հնարավորություն է տալիս Արժեթղթերի արտասահմանյան կարգավորված և չկարգավորված շուկաներում, այդ թվում՝ առևտրային համակարգ-հարթակներում (սույն պայմանագրում բոլորը միասին և առանձին՝ ԱՀ(ներ)) Արժեթղթերի և արտարժույթի առքուվաճառքի գործարքներ կնքել՝ փաստացի Համակարգի միջոցով և դրա շահագործման պայմաններով՝ ապահովելով հանախորդի անունից տրված Հանձնարարականների հաղորդումը (ի կատարում կամ ի կատարում վերահաղորդելու համար):
- 2.2 Սույն համաձայնագրով Բրոքերը Համակարգին հասանելիության տրամադրմամբ Հանախորդին ընձեռում է տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ ԱՀ-ներում գնանշումների, ինչպես նաև Արժեթղթերի գնագոյացման վրա ազդող հանգամանքների վերաբերյալ: Տեղեկատվական ծառայությունները ակտիվացվում/ապասկտիվացվում են Հանախորդի կողմից ինքնուրույնաբար Համակարգի անձնական կարգավորումների ինտերֆեյսի (account management) միջոցով:
- 2.3 Սույն պայմանագրով Բրոքերը, գործառնական հնարավորության դեպքում, Հանախորդին մատուցում է նաև Համակարգի շահագործման և Համակարգի օպերատորի հարաբերությունների հետ կապված հարցերում խորհրդատվական և կրթող բնույթի աջակցող և օժանդակող ծառայություններ՝ ողջամիտ ջանքերի գործադրման սկզբունքով:
- 2.4 սույն պայմանագրի 2.1 - 2.3 կետերում նշված ծառայությունների համար Հանախորդը վճարում է միասնական վճար՝ սույն պայմանագրի Հավելված 1-ը հանդիսացող Սակագներով սահմնված կարգով:
- 2.5 Հանախորդը պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կարգով վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և Սակագներում սահմանված սակագներին համապատասխան,
- 2.6 Բրոքերն պարտավորվում է բարեխղճորեն և պատշաճ կերպով մատուցել նշված ծառայությունները:
- 2.7 Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն համագործակցել սույն պայմանագրի կատարման շրջանակներում:
- 2.8 Հանախորդը սույնով համաձայնվում է, որ այն ԱՀ-ներում որտեղ Հանախորդը սույն պայմանագրի համաձայն կարող է Համակարգի միջոցով Հանձնարարականներ ի կատարում ուղարկելու միջոցով Գործարքներ կնքել, Հանախորդը չի կարող Հանձնարարականները ի կատարում փոխանցման առաքել Բրոքերի կողմից բրոքերային ծառայությունների մատուցման այլ միջոցներով և որ Համակարգը այդ ԱՀ-ներում Գործարք կնքելու նպատակով Հանձնարարականները ի կատարում փոխանցելու ուղարկման նպատակներով հանդիսանում է Հանախորդի և Բրոքերի միջև կապի միակ հուսալի միջոցը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

- 3.1 Համակարգում Հանախորդը ինքնուրույնաբար ձևակերպում և Համակարգի միջնորդությամբ համապատասխան ԱՀ-ներում ի կատարում հաղորդելու համար ներբեռնում է Արժեթղթերի առքուվաճառքի հանձնարարականներ, ընդ որում Բրոքերը Համակարգին Հանախորդի հասանելիությունը ապահովելու փաստի ուժով հանդիսանում է Հանախորդի հանձնարարականները ի կատարում հաղորդելու ծառայություններ մատուցող անձ (բայց ոչ դրանք կատարելու ներդրումային ծառայություն մատուցող անձ)
- 3.2 Համակարգը հնարավորություն է ընձեռում Հանախորդին Արժեթղթերի առքուվաճառքի հանձնարարականներ ի կատարում հաղորդելու համար ներբեռնել՝ որոշակի երկրների/տարածաշրջանների որոշակի ԱՀ-ներում գործարք կնքելու համար: Երկրները/տարածաշրջանները և ԱՀ-ները թվարկված են Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագներում: Սույն պայմանագրով Բրոքերը Հանախորդին վերջինիս կողմից Համակարգը Հանախորդին ԱՀ-ներում Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման համար Ծածկույթի և

- արտարժույթի փոխարկման (կոնվերտացիա) իրականացնելու հնարավորություն է տրամադրում (Ոչ ստանդարտացված գործիքների մասով՝ միայն եթե Հաճախորդը հանդիսանում է պրոֆեսիոնալ):
- 3.3 Սույն պայմանագրի 2.1.-2.3 կետերում նշված ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդը Բրոքերի պաշտոնական կայքից ներբեռնում է Համակարգի հավելվածը, որի միջոցով կնքելով Հաճախորդի պայմանագիրը Համակարգի օպերատորից ստանում է համապատասխան օգտագործողի անուն և ծածկագիր՝ Հաճախորդի հաշիվները բացելու, Համակարգ մուտք գործելու, և այն շահագործելու համար:
- 3.4 Բրոքերը 2.3. կետի հիման վրա և դրանում նշված պայմաններով աջակցում է Հաճախորդին՝ Համակարգը շահագործելու հարցերում:

#### 4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1 Համակարգը հնարավորություն է տալիս Հաճախորդին կնքել Ոչ բավարար ծածկույթով գործարքներ Նախապայմանները ապահովելու և դրանց համապատասխանելու դեպքում:
- 4.2 Հաճախորդը սույնով երաշխավորում և հավաստում է, որ լիարժեքորեն հասկանում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման՝ սույն պայմանագրով սահմանված պայմանները, ինչպես նաև գիտակցում է Ոչ բավարար ծածկույթով գործարքների և դրանց կնքման առանձնահատկությունները, Արժեթղթերի սովորական առքուվաճառքի (առանց Ոչ բավարար ծածկույթի) գործարքների համեմատ՝ առավել ռիսկի առկայության հանգամանքը, մասնավորապես կորստի դեպքում դրա մեծացումը ներդրած Միջոցների համեմատ՝ Հաճախորդի պարտավորությունների գոյացման և դրանց բազմապատկման փաստը հաշվի առնելով:
- 4.3 Հաճախորդը սույնով երաշխավորում և հավաստում է, որ լիովին և ամբողջությամբ հասկանում է Համակարգը, դրա շահագործման կանոնները, դրա բոլոր գործիքները, դրանով ներկայացվող տեղեկատվությունից օգտվելու և այն հիմք ընդունելով գործարքների կնքման ռիսկը, դրա միջոցով Արժեթղթերի առքուվաճառք իրականացնելու առանձնահատկությունները, դրանով Հանձնարարականների տեսակները, դրանց առանձնահատկությունները և դրանք Համակարգ մուտքագրելու տեխնիկան, առանձնահատկություններն ու հետևանքները:
- 4.4 Հաճախորդը սույնով երաշխավորում և հավաստիացնում է, որ ընդունում և գիտակցում է, որ Համակարգի հնարավորություններն ու գործիքները չօգտագործելու կամ սխալ օգտագործելու, ինչպես նաև Համակարգում առկա տվյալները հիմք ընդունելով ներդրումային որոշումներ կայացնելու ռիսկը կրում է միայն ինքը և որ, հետևաբար, սույն պայմանագրի համաձայն՝ Բրոքերը Հաճախորդի կողմից Համակարգի շահագործման հետ կապված որևէ պատասխանատվություն և վնասի հատուցման որևէ պարտավորություն չի կրում:
- 4.5 Բրոքերը հայտարարում է, որ, Համակարգին Հաճախորդի հասանելիությունը սույն պայմանագրի համաձայն ապահովելով, որևէ պարտավորություն և դրանից բխող պատասխանատվություն չի ստանձնում Հաճախորդին Համակարգի շահագործման կանոնները, կարգը և առանձնահատկությունները բացատրելու համար և լիովին վստահում է սույն պայմանագրի 4.1.-ից 4.4-րդ կետերում նշված՝ Հաճախորդի հավաստիացումներին և հայտարարություններին:

#### 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 5.1 Համակարգը շահագործվում է Հաճախորդի բացառիկ հայեցողությամբ և պատասխանատվությամբ:
- 5.2 Հաճախորդին սույն պայմանագիրը կնքելուց հետո Համակարգ մուտք գործելու համար - տրամադրված ծածկագրով ցանկացած մուտք Համակարգ և Համակարգով իրականացված ցանկացած գործողություն, անկախ մուտքը փաստացի իրականացրած անձի ինքնությունից, համարվում է Հաճախորդի մուտքը Համակարգ և Հաճախորդի կողմից իրականացրած գործողություն/կնքված գործարք, եթե մինչև այդպիսի մուտքը Հաճախորդը գրավոր չի տեղեկացրել Համակարգի օպերատորին Հաշվի պայմանագրով սահմանված կարգով (եթե դրանով այլ բան սահմանված չէ), որ իրեն տրամադրված ծածկագիրը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դարձած լինել այլ անձանց՝ առանց Հաճախորդի թույլատվության, և չի պահանջել իրեն տրամադրել նոր ծածկագիր:
- 5.1.1. Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է՝ հիմնվելով սույն պայմանագրում վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա, առ այն, որ Հաճախորդը

- լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողությունների իրավական և տնտեսական հետևանքները:
- 5.1.2. Հաճախորդը սույնով հավաստում է, որ հասկանում է Համակարգի բոլոր ստեղծների և ընտրանքների վրա սեղմում իրականացնելու բոլոր իրավական և ֆինանսական հետևանքները և գիտակցում դրանց նշանակությունը:
- 5.1.3. Հաճախորդը հավաստում է և գիտակցում է, որ համակարգչին հասանելիության և համակարգչով գործողություններ կատարելու համար նախատեսված սարքավորումների և միջոցների (ստեղծնաշար, մուկ, անջատման-միացման ստեղծներ և այլն) շահագործմամբ, ինչպես նաև համակարգչի և դրա պարագաների էլեկտրական սնուցման միջոցներով կամ դրանց միջամտությամբ իրականացված ցանկացած գործողություն (ստեղծնաշարի, մկնիկի, համակարգչի այլ ստեղծի ցանկացած սեղմում/քիչք և այլն), անկախ այդ գործողության գիտակցված թե՛ չգիտակցված, նախատեսված թե՛ պատահական բնույթից, կարող է հանգեցնել Արժեթղթերով Գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և/կամ փոփոխման, Ծածկույթի, շուկայական տվյալներին և տեղեկատվական ծառայություններին Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելիության ակտիվացման, ապաստիվացման, դրանց ժամանակային ռեժիմի փոփոխման և այլ իրավական փաստերի՝ դրանցից բխող ֆինանսատնտեսական հետևանքներով՝ սույն պայմանագրի և Արժեթղթերով գործարքների պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ֆինանսական կորուստների, չնախատեսված ծախսերի, Հաճախորդի դրամական և Արժեթղթերով պարտավորությունների, ինչպես նաև Գործարքներով պարտավորությունների առաջացման: Սույն կետի համաձայն Համակարգով որևէ գործողություն իրականացնելու՝ սույն կետում նշված և ցանկացած այլ հետևանքների համար պատասխանատվություն է կրում բացառապես Հաճախորդը:
- 5.3 Հաճախորդը գիտակցում, ընդունում և համաձայնվում է, որ հնարավոր են Համակարգի անկանխատեսելի ընդհատումներ Բրոքերից անկախ պատճառներով, մասնավորապես՝ Համակարգի ցանցային կապը ապահովող կապուղիների, սերվերների, կապող հանգույցների անսարքությունների, ինչպես նաև Համակարգին կապը մատակարարող անձանց, այդ թվում Համակարգի օպերատորի կողմից այդպիսի անսարքությունները վերացնելուն ուղղված միջամտություն իրականացնելու հետևանքով, և որ նման ընդհատումների համար Բրոքերը պատասխանատվություն չի կրում:
- 5.4 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը արգելափակվում է սույն պայմանագիրը և եւ/կամ Հաշվի պայմանագիրը լուծվելու դեպքում՝ լուծման օրվանից 3 օր առաջ, եթե կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվում, ինչպես նաև Հաճախորդի գրավոր դիմումի հիման վրա:
- 5.5 Բրոքերի կողմից Կայքում Համակարգի օգտագործման ձեռնարկ կամ Համակարգի շահագործման ուղեցույցներ և ուսուցողական նյութերը և/կամ Համակարգի վերաբերյալ նմանատիպ այլ նյութեր հրապարակելը և/կամ հաճախորդին տրամադրելը կամ խորհուրդ տալը չի պարտավորեցնում Բրոքերին, կրում է բացառապես տեղեկատվական բնույթ և Հաճախորդը չի կարող որևէ պահանջ ներկայացնել Բրոքերին նրա կողմից տվյալ նյութերի և խորհուրդների հիման վրա գործողություններ ձեռնարկելու հետևանքների կապակցությամբ:
- 5.6 Հաճախորդը համաձայնվում է, որ Համակարգի միջոցով Հաճախորդին հասանելի բոլոր տեղեկությունները, շուկայական տվյալները (թե՛ իրական ժամանակում, թե՛ ուշացումով ընտրանքների դեպքում), այն է՝ Արժեթղթերի առքուվաճառքի գնանշումները, տնտեսական, քաղաքական և այլ ընդհանուր բնույթ կրող և մասնավոր անձանց վերաբերող բոլոր նորությունները կրում են բացառապես տեղեկատվական բնույթ, կարող են ժամանակային և պատահական շեղումներ տալ իրական ժամանակում, ինչպես նաև որևէ այլ պահի դրությամբ համապատասխան ԱՀ-ներում իրական տվյալներից և գնանշումներից, կարող են պարունակել այլ տեխնիկական և թվաբանական անճշտություններ: Հաճախորդը դրանք օգտագործում է բացառապես իր ռիսկով: Բրոքերը պատասխանատվություն չի կրում դրանց հիման վրա ընդունված՝ Հաճախորդի ներդրումային որոշումների և գործողությունների բացասական հետևանքների և կորուստների համար:
- 5.7 Համակարգին Հաճախորդի հասանելիությունը տրամադրվում է հիմնվելով սույն պայմանագրում վերջինիս կողմից տրված հավաստիացման վրա, առ այն, որ Հաճախորդը լիարժեքորեն տիրապետում է Համակարգին, գիտակցում և հասկանում է դրանով կատարվող բոլոր գործողությունների իրավական և տնտեսական հետևանքները:

- 6.1 Սույն պայմանագրի համաձայն Համակարգի միջոցով Գործարքներ կնքելու հնարավորություն տրամադրելու, ինչպես նաև այդ հանձնարարականները ի կատարում վերափոխանցող և կատարող Գործակալներին (այդ թվում Համակարգի օպերատորին) նրանց կողմից սահմանված միջնորդավճարների փոխանցման ծառայություններ մատուցելու համար Հանախորդը Բրոքերին վճարում է միջնորդավճարներ, որոնք սահմանվում են Պայմանագրի Հավելված 1-ով:
- 6.2 Համակարգի միջոցով ցանկացած գործարքի կնքում հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Հանախորդի հաշվին առկա են այդպիսի գործարքի կնքման արդյունքում առաջացող և Հանախորդի՝ արդեն իսկ առկա դրամական և Արժեթղթերով պարտավորությունները կատարելու համար բավարար միջոցներ, եթե Բրոքերային Հաշվի սպասարկման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

## 7 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

- 7.1 Սույն պայմանագրի համաձայն Համակարգը տրամադրվում է Հանախորդին՝ բացառապես ի շահ իրեն օրինական միջոցների օգտագործմամբ Արժեթղթերով առևտուր իրականացնելու համար:
- 7.2 Հանախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերին Համակարգը 7.1. կետով սահմանվածից բացի այլ նպատակներով կամ միջոցներով օգտագործելու համար, այդ թվում՝ Համակարգին այլ անձանց հասանելիություն տրամադրելու, օրենքին հակասող նպատակներով կամ անօրինական ճանապարհով ստացված միջոցների օգտագործմամբ Արժեթղթերով առևտուր իրականացնելու համար:
- 7.3 Հանախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերին պատճառված ցանկացած վնաս և կատարած ցանկացած ծախս, որը բխում է Բրոքերին ներկայացված՝ Հանախորդի կողմից Համակարգի օգտագործման հետ կապված երրորդ անձանց պահանջներից, այդ թվում եթե այդպիսի պահանջները ներկայացվել են Բրոքերին (Բրոքերի հաշիվներից ասանկցեպտ բռնագանձվել է) Հանախորդի Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու կամ այդպիսի փակումը այնպիսի ժամանակահատվածում իրականացնելու համար, երբ Հանախորդի դրամային պարտավորությունը կամ Հանախորդի պարտավորությունը արժեթղթերով գերզանցում են Նախնական մարժայի կամ Սահմանային մարժայի մեծությունները:
- 7.4 Կողմերի պատասխանատվության այլ հարցերը կարգավորվում են սույն պայմանագրի այլ դրույթներով, Պայմաններով, իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:
- 7.5 Բրոքերը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի համաձայն Համակարգի կողմից Դիրքերի ավտոմատացված փակում իրականացնելու արդյունքում Հանախորդին հասցրած վնասի համար: Եթե Համակարգը Դիրքերի ավտոմատացված փակում չի կատարում, Հանախորդը իր ողջ գույքով պատասխանատվություն է կրում դրա արդյունքում առաջացած իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 7.6 Բրոքերը որևէ պարտավորություն չի ստանձնում Հանախորդի հաշիվների բացման, վարման, հաշվում միջոցների հաշվառման, պահառության, դրանց նկատմամբ իրավունքների գրանցման, պատահական կորստի, հաշիվները վարող և սպասարկող անձանց սնանկության կամ պարտավորությունների չկատարման համար բռնագանձումների արդյունքում Հանախորդի միջոցների կորստի և նվազման համար:
- 7.7 Համակարգի ծրագրային, տեխնիկական և աշխատանքային այլ որակների համար Բրոքերը որևէ երաշխիքներ չի տալիս և պարտավորություն չի ստանձնում՝ ապահովելու Համակարգի գործառնության շարունակականությունը և պատշաճությունը:
- 7.8 Յուրաքանչյուր պահի դրությամբ Հանախորդը ընդունում է Համակարգի աշխատանքը, «ինչպես որ է» սկզբունքով, այն է՝ Համակարգի ցանկացած հնարավոր խափանում և/կամ դանդաղում ցանկացած պատճառով (բացառությամբ Բրոքերի դիտավորյալ գործողությունների) ցանկացած պահի դրությամբ Հանախորդը ընդունում է որպես Համակարգին բնորոշ հատկություն: Բրոքերը պատասխանատվություն չի կրում այդպիսի խափանումների և/կամ դանդաղումների համար: Այնուհանդերձ Բրոքերը կջանա, սակայն չի պարտավորվում, աջակցել Հանախորդին նշված խափանումների հետ կապված հարցերում:

- 8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :
- 8.2 Համակարգի առկա օպերատորի հետ համագործակցության դադարեցման դեպքում՝ Բրոքերը այդ մասին ծանուցում է Հանախորդին սույն պայմանագրով սահմանված կարգով, ընդ որում.
- 8.2.1.1 եթե Բրոքերը համագործակցում է Համակարգի այլ օպերատորների հետ ապա Հանախորդին առաջարկում է՝
- 8.2.1.1.1 սույն պայմանագրի պայմաններով համագործակցություն Համակարգի այլ օպերատորի մոտ հաշիվներ բացելով
- 8.2.1.1.2 սույն պայմանագրից տարբերվող պայմաններով համագործակցություն, որի դեպքում Բրոքերը Հանախորդին առաջարկում է նոր պայմաններով բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի օֆերտա:
- 8.2.1.2 եթե Բրոքերը չի համագործակցում Համակարգի այլ օպերատորի հետ կամ Կողմերը համաձայնության չեն գալիս 8.2.1.1. կետում նշված պայմանագրային հարաբերություններ հաստատելու կամ շարունակելու շուրջ՝ Կողմերը լուծում են սույն պայմանագիրը 8.3 կետով սահմանված կարգով (ընդ որում 8.3 կետի գործողությունը պայմանավորված չէ 8.2 կետի որևէ պայմանի կատարմամբ և հիմք է սույն պայմանագրի լուծման անկախ այդ պայմանների կատարումից):
- 8.3 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ցանկացած պահի, ընդ որում Հանախորդը պարտավոր է իր կողմից լուծման մտադրության մասին հայտնել սույն պայմանագրի լուծման օրից 5 աշխատանքային օր առաջ: Սույն պայմանագիրը Հանախորդի նախաձեռնությամբ լուծվելու դեպքում Հանախորդի միջոցների տնօրինման հարցը լուծվում է համաձայն Հանախորդի պայմանագրի: Սույն պայմանագիրը կարող է միակողմանիորեն փոփոխվել բացառապես Բրոքերի կողմից՝ այդ մասին Հանախորդին ծանուցելու կամ Կայքում համապատասխան փոփոխություն տեղադրելու միջոցով: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Հանախորդի կողմից ծանուցումը ստանալու կամ Կայքում համապատասխան գրառումը փոփոխվելու 11-րդ օրը: Ծանուցումը պետք է պարունակի լրացման/փոփոխության տեքստը՝ ստորագրված Բրոքերի իրավասու անձի կողմից:
- 8.4 Ի լրումն այլ հիմքերով դադարելուց՝ սույն պայմանագիրը դադարում է Հանախորդի հաշիվները փակվելու ուժով և փակվելու օրից:
- 8.5 Հաշվի առնելով որ Բրոքերը Հանախորդի միջոցներին չի տիրապետում և դրանք ի պահ չի ընդունում, Պայմանագրի լուծման դեպքում Հանախորդի միջոցների վերդարձման հարաբերությունները ծագում են բացառապես Հանախորդի և Համակարգի օպերատորի միջև և կարգավորվում են բացառապես Հաշվի պայմանագրով:
- 8.6 Հանախորդը գիտակցում է, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն սահմանվել է, որ լեվերիջով (Ոչ բավարար ծածկույթով) ոչ ստանդարտացված գործարքներ կարող են կնքել միայն պրոֆեսիոնալ հանախորդները, և նույնիսկ այդ դեպքում՝ լեվերիջի (սույն պայմանագրի համաձայն՝ Համակարգի միջոցով Ոչ բավարար ծածկույթով գործարքների հնարավորության տրամադրման համար Հանախորդի կողմից ներդրված և անհրաժեշտ սակայն չներդրված միջոցների հարաբերակցությունը) չպետք է գերազանցի 1/300 ռեզիդենտ Հանախորդների դեպքում և 1/400 ոչ ռեզիդենտ Հանախորդների դեպքում: Հանախորդը գիտակցում է, որ Բրոքերը չի կատարում Հանախորդի պատվերները, այլ միայն փոխանցում է դրանք ի կատարում՝ Համակարգին հասանելիություն տրամադրելու գործիքի միջոցով, ուստի նաև չի տրամադրում լեվերիջ (Ծածկույթ) Հանախորդին, այլ Համակարգի միջոցով թույլ է տալիս օգտվել այլ անձանց, այդ թվում Համակարգի օպերատորի կողմից տրամադրվող լեվերիջից՝ Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու հնարավորությունից: Հանախորդը պարտավորվում է Ոչ բավարար ծածկույթով ոչ ստանդարտացված գործարքներ (այդ թվում՝ արտարժույթի փոխարկման՝ ֆորեքս գործարքներ կնքելիս) գերծ մնալ վերոնշյալ 1/300 և 1/400 հարաբերակցությամբ (հայտարարում) գերազանցող Ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելուց: Համաձայն Կանոնակարգի Մարժայի մեծությունը չի կարող պակաս լինել 5,000,000 ռեզիդենտի, իսկ 2,500,000 ոչ ռեզիդենտի համար: Բրոքերը

իրավասու է Համակարգում արգելափակել ի խախտումն նշված պահանջների, որևէ գործարքի Կնքումը:

- 8.7 Այն աղբյուրները և փաստաթղթերը, որոնց սույն պայմանագրում հղում է արվում՝ որպես սույն պայմանագրով որոշվող պայման պարունակող, հանդիսանում են սույն պայմանագրի բաղկացուցիչ մասերը պայմանով որ օբյեկտիվորեն հնարավոր է հավաստիանալ ցանկացած պահի դրությամբ դրանց բովանդակության մեջ: Սույն կետում նշված փաստաթղթերի և աղբյուրների (ներառյալ Պայմանագիրը և Պահառության պայմանագիրը) և սույն պայմանագրի դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են սույն պայմանագրի դրույթները:
- 8.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, իսկ սույն պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.9 Բրոքերը և Հաճախորդը տեղեկատվություն են փոխանակում հետևյալ կապի միջոցներով՝ հեռախոսային խոսակցություններ, ֆաքս, էլեկտրոնային փոստ՝ ինտերնետային ցանցի կամ Բրոքերի և Հաճախորդի միջև հաղորդակցությունը ապահովող այլ ցանցի միջոցով, բնօրինակ փաստաթղթերի փոստային/սուրհանդակային առաքում և առձեռն հանձնում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ : Հաճախորդի իրավական կարգավիճակի վրա ազդող տեղեկատվության հրապարակումը Բրոքերի ինտերնետային կայքում՝ այդ մասին Հաճախորդին էլ. փոստով ծանուցմամբ: Հաճախորդը համաձայնում է, որ սույնում նշված միջոցներից ցանկացածը իր համար հանդիսանում է կապի հուսալի միջոց, սակայն տեղեկատվության փոխանակումը հիմնականում տեղի է ունենալու էլ. փոստի և հեռախոսի միջոցով: Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև տեղեկատվության ցանկացած փոխանակում, հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե փաստաթուղթն առաքվել է հետևյալ հասցեներով՝

Բրոքերի համար՝ ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 2, էլ. փոստ՝ [brokerage@ameriabank.am](mailto:brokerage@ameriabank.am), հեռ՝ +374 10 513170, +374 10 513169

Հաճախորդի համար՝ \_\_\_\_\_, ֆաքս՝ \_\_\_\_\_, էլ փոստ՝ \_\_\_\_\_, հեռ՝ \_\_\_\_\_

ընդ ոչում Կողմերը սույնով հավաստում են, որ 8.9 կետում նշված հասցեներով առաքված հաղորդագրությունը համարվում է պատշաճ կերպով առաքված՝ կապի հուսալի միջոցներով՝ անկախ այն փաստից թե նշված հասցեներում փաստացի ով է ստացել կամ ում է հասանելի դարձել համապատասխան հաղորդագրությունը:

- 8.10 Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր բնօրինակներից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին: Սույն պայմանագրի կնքման պահից կողմերի միջև [նշել ամսաթիվը] կնքված էլեկտրոնային առեվտրային տերմինալի միջոցով արժեթղթերով գործարքներ կնքելու հնարավորության տրամադրման վերաբերյալ թիվ [-]պայմանագիրը համարվում է լուծված և ուժը կորցրած:

ԲՐՈՔԵՐ	ՀԱՃԱԽՈՐԴ
<p>«Ամերիբանկ» ՓԲԸ ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 2</p> <hr/> <p>Ստորագրություն (Կ.Տ.)</p>	<p>Հաճախորդը հավաստում է, որ պատշաճ կերպով ծանոթացել է սույն պայմանագրին Բրոքերի գլխամասում իրեն տրամադրված, համացանցային (web) կայքում <a href="http://www.ameriabank.am">www.ameriabank.am</a> հասանելի բոլոր սակագներին, հայտարարագրերին, տեղեկացումներին, գաուշացումներին, պայմաններին և այլ փաստաթղթերին, չունի դրանց հետ կապված որևէ հարց, առաջարկություն, դրանց բովանդակությունը իրեն լրացուցիչ բացատրելու կարիք չունի և յիարժեքորեն գիտակցում է սույն</p>



	<p>պայմանագիրը ստորագրելու և այն կատարելու հետևանքները:</p> <hr/> <p>Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն ԿՏ</p>
--	---

#### ՀԱՎԵԼՎԱԾ 1

Էլեկտրոնային առևտրային տերմինալի միջոցով արժեթղթերով գործարքներ կնքելու հանձնարարականներ հաղորդելու ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի

---

ՍԱԿԱԳՆԵՐ

Հավելված № 2

Էլեկտրոնային առևտրային տերմինալի միջոցով արժեթղթերով գործարքներ կնքելու  
հանձնարարականներ հաղորդելու ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի

---

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԱՌԵԻՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՎ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ԲՐՈՔԵՐ) ԿՈՂՄԻՑ  
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ